
Հայ նվագարանային երաժշտություն, Պարեղանակներ, կազմող՝ Մուրադյան Ա., երաժշտական խմբագիր՝ Մարտիրոսյան Խ., «Ամրոց Գրուպ» հրատ., Ե., 2008, 171 էջ:

Հայ ժողովրդական երգեր և նվագներ, կազմողներ՝ Դերոյան Դ., Թագակյան Ջ., ըստ 1927-1929 թթ. գիտարշավային նյութերի, դեկ.՝ Կուշնարյան Ք., «Ամրոց Գրուպ» հրատ., Ե., 2008, 239 էջ:

ԱՐԱՄ ՔՈՉԱՐՅԱՆ, Հարկանային և շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, խմբագիրներ՝ Խուդաբաշյան-Մարգարյան Կ., Պիկիչյան Հ., Մեհրաբյան Ժ., Բաղդասարյան Ա., «Ամրոց Գրուպ» հրատ., Ե. 2008, 247 էջ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի Ա. Քոչարյանի անվան ձայնադարանի Ֆոնդը բաղկացած է շուրջ 20.000 նմուշից, որոնք ձայնագրել են հայ մշակույթի երախտավորներ Ք. Կուշնարյանը, Մ. Թումաճանը, Սրբ. Լիսիցյանը, Ա. Քոչարյանը, Մ. Մուրադյանը և ինստիտուտի գիտաշխատողների ևս չորս սերունդ՝ 1927 թ. մինչև մեր օրերը: Այն ներառում է պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջանների ավանդական երգն ու նվագը՝ ժանրային և թեմատիկ ողջ բազմազանությամբ: Ձայնագրված ավանդական երաժշտության հավաքածուն պատմամշակութային խոշոր հարստություն է, որը գիտական արժեք ունի և՛ երաժշտական ազգաբանության ու հայագիտության ուսումնասիրության, և՛ մշակութային կապերի ու փոխառնչությունների տեսանկյունից: Ձայնադարանի հավաքածուն կարելի է հնչող վավերագրերի շտեմարան անվանել, քանզի նրանում ամբարված ձայնագրությունները մեր ժողովրդի դարավոր մշակույթի ու պատմության երաժշտախոսքային բնագրերն են:

Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Կարինե Խուդաբաշյան-Մարգարյանը դեռևս 1985 թ. առաջարկեց ձայնադարանի հիմքի վրա «Հայ ավանդական երաժշտության 30 հատորանոց մատենաշար» ստեղծել, և բաժնի աշխատակիցների մասնագիտական հմտություններն ու հետաքրքրությունները հաշվի առնելով՝ մանրամասն նախագիծ կազմվեց: Ըստ այդմ՝ մատենաշարը [խմբագրական կազմ՝ Կ. Խուդաբաշյան-Մարգարյան (գլխ. խմբագիր), Պիկիչյան Հ., Թագակյան Ջ., Մեհրաբյան Ժ.], որպես գիտական հիմնարար հրատարակություն, առաջին անգամ մասնագիտական շրջաններին և երաժշտությամբ հետաքրքրվողներին պետք է ներկայացներ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ձայնադարանային հավաքածուի ընտրանին: Հատորները կազմվում էին ըստ անձնական հավաքածուների (Կոմիտասի, Ք. Կուշնարյանի, Սրբ. Լիսիցյանի և այլոց), պատմաազգագրական շրջանների երաժշտական ժառանգության (Վասպուրականի երգեր ու նվագներ, Վայոց Ձորի ավանդական երգեր և այլն), ժանրային պատկանելության (հայոց ավանդական հարսանյաց ծեսի երաժշտությունը, հայրենասիրական երգեր և այլն) և կատարման կերպի (նվագարանային մեղեդիներ): Հրատարակվող յուրաքանչյուր հատոր բաղկացած է նախաբանից, նոտագրված երաժշտական մասից (համապատասխան բանաստեղծական տեքստով), գիտական ծանոթագրություններից, բարբառային բառերի բացատրական բառարանից, քարտեզից, տեղանունների և բանասացների ցան-

կերից ու լուսանկարներից: Ժողովածուները գրված են հայերեն, ռուսերեն լեզուներով, իսկ ամփոփումները՝ անգլերեն:

Նվագարանային արվեստն ամփոփվում է մատենաշարի երկու հատորում (առաջին և երկրորդ պրակներ): Նպատակը՝ մասնագետներին և երաժշտության այս ժանրի սիրահարներին ներկայացնել թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս բնակվող հայերի կյանքում հնչող գործիքային նվագների ամբողջական պատկերը:

Երկարատև սպասումներից հետո լույս տեսավ մատենաշարի անդրանիկ հատորը, որը նվագարանային երաժշտության առաջին ժողովածուն է: Բաղկացած է չորս բաժնից և ընդգրկում է Վայքի, Շիրակի, Արցախի և Աբխազիայում բնակվող համալսարանային պարային-նվագարանային մշակույթի 54 ինքնատիպ նմուշ: Այն հայոց ավանդական նվագների ամբողջական հավաքածուի ստեղծման անդրանիկ փորձն է, հիմնված է 1950-ական թթ. մինչև 1986 թ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտարշավային նյութերի վրա՝ ձայնագրված հայկական երաժշտագիտության նվիրյալներ Մաթևոս Մուրադյանի և Ալեքսանդր Թադևոսյանի կողմից: Գրքում ներառվել են նաև համալսարանային ավանդական պարային նվագները՝ ձայնագրված 1986 թ., Աբխազիայում (ք. Սուխումի), իրականացված երկու գիտարշավների ընթացքում (գրանցումը և վերձանությունը՝ Աշ. Մուրադյանի): Նվագարանային պարի ժանրն այսօր էլ ամենատարածվածն է, քանզի ժողովրդական բոլոր տոներն ու արարողությունները, հարսանեկան ծեսը, ընտանեկան հացկերություններն ու ամենատարբեր խրնջույթներն ի շարք երգային ժանրերի, ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում ուղեկցվում են նաև նվագարանային երաժշտությամբ: Այդ հավաքություններում մեծ տեղ է տրվում պարային երաժշտությանը, քանզի շուրջպարը, զուգապարն ու մենապարը ժողովրդական տոնի և ուրախության անբաժանելի տարրն են, որին մասնակցում են հասարակության բոլոր շերտերն ու տարիքային խմբերը: Ժողովածուի նախաբանում հակիրճ ներկայացվում են նոտագրման հիմնական սկզբունքներն ու այն նվագարանները, որոնցով հնչել են հայոց ավանդական պարեղանակները: Դրանք են՝ զուռնա, դուդուկ, շվի (թութակ), պարկապզուկ, դիոլ, թառ, համալսարանական քյամանի (քեմոնա) և համալսարանական քեմենչե (քամանչա): Ժողովածուն կազմվել է պարեղանակների դասակարգման տարածքային սկզբունքով՝ Վայքի, Շիրակի, Արցախի և Համալսարանի ժողովրդական նվագարանային պարեղանակներ: Յուրաքանչյուր բաժնում մեղեդիները ներկայացվում են ըստ նվագարանների՝ փողային, լարային (նվագախմբային և մենանվագային կատարումներ):

Հայաստանում տարածված պարեղանակները կարելի է դասակարգել 2 մեծ խմբի՝ ծիսական և առօրեական, որոնք կարող են կատարվել նաև ծեսերի ընթացքում՝ հարմարեցվելով արարողակարգին: Այս երկրորդ խումբը կարելի է անվանել նաև կենցաղային: Ժողովածուի մեջ ընդգրկված են երկու խմբերին բնորոշ պարեղանակները: Ծիսական պարը ներկայացվել է միայն հարսանեկանի միջոցով, որը ներառում է ավանդական հարսանիքի գլխավոր անդամների՝ հարս ու փեսայի, նրանց ծնողների, խնամիների, ինչպես նաև հարսին հագցնելու և հարսնառի պարերը: Տարբեր բնակավայրերից գրանցվել են նաև հարսանեկան ծեսի այլ մասնակիցների պարեր, որոնք աստիճանաբար ներմուծվել են ծիսակարգ և բնորոշ դարձել տվյալ տարածքի համար: Ծիսական պարեղանակների մի մասը ժամանակի ընթացքում հեռացել է բուն արմատից և կատարվում է նաև դրանից դուրս: Ժողովածուում ընդգրկված պարերի մեծ մասը նման բնութագիր ունի, քանզի կատարվում է որևէ տոնախմբության ժամանակ:

Կարելի է նաև նշել, որ պարեղանակը ևս հաճախ, առանձնանալով կոնկրետ պարային կատարումից, կարող է անկախ հնչել՝ որպես նվագարանային մեղեդի, սակայն պահպանում է պարային ռիթմը: Մինչ այս, հայկական ֆոլկլորագիտության մեջ ընդունված էր երգերն ու նվագարանային մեղեդիները նոտագրել մեկ քառյակի սահմաններում, իսկ նվագարանային երաժշտության պարագայում՝ միայն մեղեդիատար նվագարանի նվագաբաժինը, առանց նվագակցության (դամբաշ և դիոլ)¹: Նոտագրման այսպիսի սկզբունքների կիրառությամբ հնարավոր չէր դիտարկել մեղեդիների տարբերակյանացումը, երկձայն ու եռաձայն հնչողությունն ու դամի առանձնահատկությունները, ինչպես նաև նվագի ամբողջական պատկերը: Այդ պատճառով ծայրեծայր նոտագրվել են մեղեդին և նվագակցությունը (ձայնառություն և հարվածային նվագարան) հնարավորինս հարազատ մնալով հնչող նյութին:

Մատենաշարի երկրորդ հատորը կազմվել է 1927-1929 թթ., Ք. Կուշնարյանի ղեկավարած գիտարշավների² նյութերի հիման վրա: Այն ընդգրկում է հայոց ավանդական երգերի ու նվագների

գիտական-գեղարվեստ-

¹ Հնչող նվագարանային նյութի ամբողջական նոտագրման առաջին փորձերից էին Սպ. Մելիքյանի հրապարակումները [տե՛ս Մելիքյան Սպ., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Ե., 1935, էջ 60 (Ճնճղկի Մահարի), **Նույնի՝** Հայ ժողովրդական երգեր և պարեր, Ե., 1949, էջ 161-178 (մեղեդի և հարվածային նվագարան)]: Չայնագրված նյութը ծայրեծայր նոտագրելու օրինակներից է նաև Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հրատարակած «Թալին» ժողովածուն [կազմողներ՝ Փահլևանյան Ա. և Մահակյան Ա., խմբ.՝ Բրուտյան Մ., Ե., 1984 (միայն N 44-ն է ներկայացված մեղեդու և հարվածային նվագարանի զուգահեռ նոտագրությամբ)]:

² 1927 թ. Լենինգրադի (այժմ՝ Մանկտ Պետերբուրգ) պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական գիտարշավը (ղեկավար՝ Ք. Կուշնարյով, մասնակից-ֆոլկլորագետներ՝ Եվգենի Գիպպիուս և Զինաիդա Էվարդ) ընդգրկում էր Թիֆլիս, Երևան, Լենինական (Գյումրի), Կամո (Գավառ) քաղաքները, Նոր-Բայազետի (Գեղարքունիքի մարզ) և Ախուրյանի (Շիրակի մարզ) շրջանների մի շարք գյուղեր: Ըստ Գայանե Չեբոտարյանի՝ ֆոնոգրաֆի (գլանավոր ձայնագրող սարք) օգնությամբ գիտարշավի ընթացքում ձայնագրվեցին 250-ից ավելի գյուղական և քաղաքային ժողովրդական երգ ու նվագ, բանավոր ավանդույթի հոգևոր երգերի կատարումներ, աշուղական ստեղծագործություններ: Մեկ տարի անց՝ 1928 թ. Ք. Կուշնարյանը միայնակ մեկնեց գիտարշավի՝ Սյունիքի և Վայոց ձորի մարզեր, ինչպես նաև Թիֆլիս և Երևան: Այս ընթացքում նրա կատարած շուրջ 150 ձայնագրություններն առանձնանում են գյուղական երգերի ժանրային բազմազանությամբ, նվագարանային մուղամների, աշուղական ու քաղաքային երգարվեստի արժեքավոր նմուշներով: Ք. Կուշնարյանի ղեկավարած երրորդ գիտարշավին (1929 թ.) մասնակցում էին երաժշտության տեսաբան Յուրի Տյուլինը, Ք. Կուշնարյանի պոլիֆոնիայի դասարանի կոմպոզիտոր-ուսանողներ Հարո Ստեփանյանն ու Տիգրան Տեր-Մարտիրոսյանը: Այս անգամ արշավախումբը շուրջ երեք շաբաթ նյութեր էր գրանցում Շիրակի, Արթիկի, Անիի, Արագածոտնի, Ապարանի և Արագածի շրջանների գյուղերում և հարավային Վրաստանի Մառնեուլի շրջանի Շահումյան ավանում (ավելի քան 150 նմուշ): Երեք գիտարշավների ընթացքում ամբարված գեղարվեստական ու գիտական բարձրարժեք, բազմաթիվ նմուշներով հարուստ կուշնարյանական հավաքածուն միայն անցյալ դարի 60-ական թթ. սկզբին, Ք. Կուշնարյանի հրատարակած «Вопросы истории и теории армянской моно-дической музыки» հիմնարար աշխատության խմբագիր, երաժշտագետ-բանահավաք, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ռոբերտ Աթայանի նախաձեռնությամբ՝ ձայներիզների վրա պատճենագրվեց ու հանձնվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ձայնադարանին: Այդ գիտարշավներից մեզ հասած հնչյունային վավերագրերն իրենց տեսակի մեջ բացառիկ են:

տական բարձրարժեք 141 նմուշ: Ընտրանու դասակարգումը կատարվել է ըստ ժանրային-թեմատիկ սկզբունքի (օրորերգեր, աշխատանքային, կենցաղային-պատմողական, զինվորագրության երգեր, մահերգեր, սիրերգեր, կատակերգեր, պարերգեր, զուգերգեր, հոգևոր երգերի ժողովրդական կատարումներ, պարեղանակներ և նվագներ): Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում օրորերգերը, հորովելներն ու մահերգերը, որոնք, ըստ Ջ. Թագակչյանի՝ տիպականությամբ ու գիտական-գեղարվեստական դրսևորումների առումով, համարժեք են կոմիտասյան գրառումներին: Նրա համոզմամբ՝ XX դարասկզբին բնորոշ թեմատիկ ու էլևեջաչափական ընդհանրություններով աչքի ընկնող ժողովածուի կենցաղային պատմողական ու զինվորագրության երգերը, կատակերգերը, մեծաքանակ սիրերգերն ու պարերգերը, նաև պարեղանակներն ու նվագները ներդաշնակորեն աղերսվում են Սպ. Մելիքյանի գրեթե նույն ժամանակահատվածում կատարած ձայնագրություններին:

Մատենաշարի կուլշնարյանական ժողովածուում, հայ իրականության մեջ առաջին անգամ երգերը հրատարակվեցին երաժշտաբանաստեղծական տողերի տարանջատման (ուղղահայաց ռանժիր) եղանակով, իսկ բանաստեղծական տեքստերն՝ ըստ մեղեդու կառույցի, որի հետևանքով, միշտ չէ, որ պահպանվել է զուտ բանաստեղծական շարադրածը: Բացի այս, կիրառվել է նաև բանաստեղծական տողի երաժշտական կառույցից բխող տողատման կերպը: Նվագարանային նմուշներում մեղեդու բաժանումները տրվել են հնգագծերի վերնամասում նշված շեղագծիկներով (նախադասության ավարտը մեկ, պարբերությանը՝ երկու): Բազմամաս շարադրանքի հատվածները միմյանցից առանձնացվել են երաժշտական երկգիծ վերջակետերով: Երաժշտությանն առնչվող մասնագիտական դիտարկումները տրվել են տողատակերում, իսկ «Ծանոթագրություններ» բաժնում գետեղվել են տեղեկատվական տվյալները (ձայնագրման տարեթիվը, տեղանունը, կատարողի և Արվեստի ինստիտուտի ձայնագրանի ֆոնդային տրվյալները), նոտային վերծանությունների մասին տեղեկություններ, ինչպես նաև խոսքային կառույցներին վերաբերող որոշ պարզաբանումներ: Ժողովածուն եռալեզու է, ունի նաև բարբառային բառերի բառարան: Հիշյալ երկու ժողովածուները ոչ միայն մասնագետներին հնարավորություն կըտան ավելի խորը և ամբողջական տպավորություն ստանալ հայոց ավանդական երգային ու նվագարանային մշակույթների մասին և նորանոր ուսումնասիրությունների նյութ կդառնան, այլև կնպաստեն հարստացնելու կատարողների երգացանկը՝ դրանով իսկ կենդանի ու անաղարտ պահելով ժողովրդական երաժշտության այս ոլորտները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի վերջին հրատարակություններից է Ա. Քոչարյանի ինքնատիպ և խիստ արժեքավոր հետազոտությունը, որ հիմնված է անվանի երաժշտագետի բազմամյա պրպտումների և հարուստ գիտարշավային նյութերի վրա, 1963 թ. պաշտպանվել է որպես թեկնածուական ատենախոսություն: Ա. Քոչարյանի աշխատությունը հայկական նվագարանների երաժշտագիտական մինչ օրս չգերազանցված ուսումնասիրություն է՝ կազմված նախաբանից, երկու գլխից և վերջաբանից: Առաջին գլուխը նվիրված է հարկանային նվագարաններին, երկրորդը՝ փողայիններին: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է պատմական ակնարկով, որից հետո մանրամասնորեն քննության են առնվում տվյալ ընտանիքի նվագարանների բոլոր տեսակները և օժանդակ միջոցները: Այսպես, հեղինակը հարկանայինների շարքում թմբուկները դիտարկում է ըստ կառուցվածքի, ձևի, նյութի և թաղանթի քանակի (էջ 20-49): Օժանդակ միջոցների մեջ դասակարգում է մարդու մարմնի մասերը (ծափ, ոտքի թակոց, մատները

չթթոց), «բնության պարագաների» մեջ՝ խխունջները, փայտի կտորները, քարերը, «Կենցաղային պարագաների» մեջ՝ ափսեներ, շշեր, թասեր և այլն (էջ 49-53): Աղմկային գործիքների շարքում քննության է առնում ժողովրդի տոնական-ծիսական ավանդություն տարածված նվագարաններից կարկաչան, չխչխկանը, ճռռիկը, եռանկյունը և չաղանան: Աղմկային-հարկանային նվագարանների մեջ ներառում է նաև դողանջող գործիքները՝ ծնծղա, քշոց, կոչնակ, գանգ, գոնգ, որ առավելապես հայտնի էին հոգևոր ավանդություն (էջ 53-56): Երկրորդ գլխում Ա. Քոչարյանը փողային նվագարանները դասակարգում է ըստ կառուցվածքի՝ մունդշտուկային (եղջերափող, մետաղյա փողեր, գալարափող), սրնգային (թռչնաձև սրինգ, բազմափող սրինգ, միափող սրինգ, հովվական նվագարաններ, թութակ-սրասրինգ-շվի), լեզվակային ընտանիքներին պատկանողներ (պկու, պարկապզուկ), գույգ լեզվականի նվագարաններ (դուդուկ, գուռնա): Փողային նվագարանների պատմատեսական մասին կից բերում է յուրաքանչյուր նվագարանի տիպի և առանձին տեսակների ճշգրիտ չափագրությունը՝ պատմական՝ «հին նվագարաններ» և ժամանակակից կտրվածքներով: Առանձին աղյուսակներով ներկայացնում է նաև նվագարանի ձայնաշարը, ձայնաձավալը և հնչարտաբերման կարգը՝ մատների դիրքի համաձայն (էջ 79-198): Գիտական ու կատարողական բարեխղճությամբ բացատրում է նվագարանի կատարման տեխնիկական միջոցներն՝ ըստ ժողովրդական վարպետներից գրառած նյութերի: Ուշագրավ է Քոչարյան երաժշտագետի մոտեցումը նվագարանների այս երկու խոշոր ընտանիքների հայաստանյան պատկերը բացահայտելու առումով: Հեղինակը քաջատեղյակ է Հայաստանում, Խորհրդային Միությունում և արտասահմանում հրատարակված այս ոլորտի աշխատանքներին և ձգտել է իր գործը ևս կառուցել ժամանակի առաջադեմ փորձը տեղայնացնելով: Ասվածի վկայությունն է աշխատանքի վերջում ներկայացված գրականության ցանկը, որտեղ ներառված են հայերեն, ռուսերեն, անգլերեն ու գերմաներեն լեզուներով տպագրված մասնագիտական արժեքավոր ուսումնասիրությունները: Յուրաքանչյուր գլուխ և բաժին սկսվում է նվագարանի տվյալ ընտանիքի կամ տեսակի ծագումնաբանական խնդիրների քննությամբ: Նվագարանի ծագումը կապվում է հասարակության զարգացման հետ՝ փորձ է արվում հնարավոր զուգահեռների շնորհիվ ճշտել դրանց ստեղծման, ապա նաև զարգացման, գործառության, կենցաղավարման պայմաններն ու փոխառնությունները: Նվագարանների ուսումնասիրման ոլորտում հեղինակն առաջնորդվում է համեմատական երաժշտագիտության մեթոդների ընձեռած հնարավորություններով: Փորձում է բացահայտել նվագարանների պատրաստման հումքի, կառուցվածքի, հրնչարտաբերման, ձայնաձավալի ու ձայնաշարի, երկացանկի, գրական, ժողովրդախոսակցական և օտարալեզու (հունարեն, պարսկերեն արաբերեն, թուրքերեն, ռուսերեն) տերմինաբանության օրինակափոխություններն ու տարբերություններն աշխարհի տարբեր ժողովուրդների մշակույթներում: Երաժշտագիտական խնդիրներին բնորոշ հարցադրումները զուգորդում է նաև այլ հասարակական գիտությունների՝ դիցաբանության, ազգաբանության, հնագիտության, աղբյուրագիտության, նաև մանրանկարչության և կիրառական արվեստի տվյալներին: Նվագարանը քննության է առնվում տարածքային-աշխարհագրական, ժամանակային, սոցիալական կտրվածքներով: Փողային նվագարանների կատարումների նոտային վերծանությունների շնորհիվ ավելի ճշգրիտ ու ընկալելի է դառնում տեսական նյու-

թը: Պետք է խոստովանել, որ հայոց ավանդական նվագարաններին նվիրված այսպիսի համապարփակ ուսումնասիրություն մինչև օրս չի հրատարակվել, թեև առանձին նվագարաններին ու դրանց ընտանիքներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ են տպագրվում նաև մեր օրերում:

Նախաբանից և հեղինակի ձայնադարանային ֆոնդի հավաքածուից կարելի է ենթադրել, որ հեղինակը նպատակադրվել էր շարունակել ուսումնասիրությունը նաև Հայաստանում տարածված լարային նվագարանների առումով, որի մասին, ցավոք, որևէ այլ փաստ չունենք: Մեր երաժշտագիտության մեջ վաղուց արդեն հասունացել էր հայոց ավանդական նվագարանների համակողմանի ուսումնասիրության և հրատարակման բացը լրացնելու խնդիրը, և այս առումով, տաղանդավոր երաժշտագետի այս աշխատանքը տպագրելն անհրաժեշտություն էր: Սույն հրատարակությունը գնահատանքի և երախտիքի տուրք է երաժշտագետ-նվիրյալին, որի շնորհիվ այսօր հնարավորություն ունենք ամբողջական պատկերացում կազմելու հայոց ավանդական կյանքում տարածված նվագարանների այս երկու խոշոր ընտանիքների մասին՝ համեմատելով տարբեր մշակույթներում կիրառվող դրանց զուգահեռների և մերօրյա փոխակերպումների հետ:

Գրախոսվող բոլոր երեք գրքերն էլ հրատարակվել են պետպատվերով՝ ՀՀ Մշակույթի նախարարության հովանավորությամբ:

ՊԻԿԻՅԱՆ Հ. Վ.

Պատմական գիտությունների թեկնածու